

ԳԱՎԱ ՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ

09.02.2013թ.

Մասնակցում էին խորհրդի 17 անդամներ

Օրակարգ`

1. 2013 թվականի ամփոփիչ ատեստավորմանը նախապատրաստվելու մասին հարցը
2. Ամփոփիչ ատեստավորման հարցաշարը և ավարտական աշխատանքի թեմաները հաստատելու մասին հարցը
3. Գրախոսման կարգի դրույթների իրականացման ընթացքը ֆակուլտետում
4. Միջանկյալ քննությունների կազմակերպման հարցը

1. Լսեցին 2013 թվականի ամփոփիչ ատեստավորմանը նախապատրաստվելու մասին հարցը /Զեկուցող` Ս. Ամիրխանյան/

Արտահայտվեցին Հ. Զաքոյանը, Ս. Հերզոյանը, Ս. Բագոյանը, Գ. Խաչատրյանը, Հ. Ղուլոյանը, Ս. Ամիրխանյանը

Որոշեցին

1. Հիմք ընդունելով ԳՊՀ ռեկտորի շրջաբերականը` հաստատել ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2013թ. ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման ժամանակացույցը:

2. Հանձնարարել դեկանատին և ամբիոններին` հետևելու դրանց կատարման ընթացքին և ռեկտորատին պարբերաբար տեղեկացնել այդ մասին:

2. *Լսեցին* Ամփոփիչ ատեստավորման հարցաշարը և ավարտական աշխատանքի թեմաները հաստատելու մասին ամբիոնների վարիչների զեկույցները /Զեկույցողներ՝ Վ. Կարապետյան, Հ. Ղուլոյան, Հ. Զաքոյան/

Արտահայտվեցին Դ. Մովսեսյանը, Հ. Հարությունյանը, Ս. Մարկոսյանը, Հ. Ղուլոյանը, Վ. Առաքելյանը, Ս. Ամիրխանյանը

Որոշեցին՝

Հաստատել ամփոփիչ ատեստավորման հարցաշարը և ավարտական աշխատանքների թեմաները:

3. *Լսեցին* ամբիոնի վարիչներ Հ. Զաքոյանի, Հ. Ղուլոյանի և Վ. Կարապետյանի զեկույցումները ավարտական աշխատանքների գրախոսման կարգի դրույթները իրականացնելու հարցերի, նախորդ տարիներին թույլ տրված բացթողումների և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի կողմից արված դիտողությունների մասին: Հ. Ղուլոյանը նշեց, որ գրախոսություններում քիչ են անդրադառնում թերություններին: Հ. Զաքոյանը նշեց, որ երբեմն նկատվում են ավարտական աշխատանքների ներկայացման ժամկետների խախտումներ, գրախոսություններում նշված թերությունները կրում են ընդհանուր բնույթ, քիչ են նշվում հետազոտական բնույթի թերություններ:

Արտահայտվեցին Մ. Հերգնյանը, Գ. Խաչատրյանը, Հ. Ղուլոյանը, Վ. Առաքելյանը, Ս. Ամիրխանյանը:

Որոշեցին Հանձնարարել ամբիոններին խիստ հետևել ավարտական աշխատանքների ներկայացման ժամկետներին, աշխատանք տանել գրախոսողների հետ այդ գործում եղած թերությունները վերացնելու, նրանց պատասխանատվությունը բարձրացնելու համար: Հանձնարարել ամբիոններին՝ ուսանողների հետ անցկացնել խորհրդատվություն ավարտական աշխատանքների կատարման վերաբերյալ:

4. *Լսեցին* Միջանկյալ քննությունների կազմակերպման մասին հարցը /Զեկույցող՝ Մ. Հերգնյան/: Զեկույցողը նշեց միջանկյալ քննությունների անցկացման գործում նախորդ կիսամյակներում նկատված թերությունների, բացթողումների մասին: Մասնավորապես,

ամդրադարձավ հարցաշարերի կազմման, քննության ընթացքում ուսանողների ակադեմիական ազնվության հայեցակարգի պահանջների կատարման ընթացքին:

Արտահայտվեցին Գ. Մուրադյանը, Հ. Հարությունյանը, Հ. Ղուլոյանը: Ս. Ամիրխանյանը նշեց, որ միջանկյալ քննությունների արդյունքները հանդիսանում են ուսման որակի բարձրացման ցուցանիշներ և ուսանողը հենց ուսումնական տարվա սկզբից պետք է պատրաստվի, քանի որ հաճախ առաջին արդյունքները լինում են ցածր՝ հատկապես առաջին կուրսերում: Պետք է ուշադրություն դարձնել ուսանողների համար միջանկյալ քննությունների հարցաշարերի պարզաբանմանը:

Որոշեցին 1. Հանձնարարել դեկանատին և ամբիոններին՝ հետևողական աշխատանք տանել միջանկյալ քննությունների գործընթացը պահանջվող մակարդակով կազմակերպելու և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ խորհրդատվություններ կազմակերպելու համար:

2. Հանձնարարել կուրսղեկներին ցածր կուրսերում պարզաբանումներ տալ կրդիտային համակարգի առանձնահատկությունների և գնահատման համակարգի վերաբերյալ:

Խորհրդի նախագահ՝

Ս. Ամիրխանյան

Քարտուղար՝

Ա. Ավետիսյան